ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՖԱՆՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ՖԱՆՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

## *ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

ՖԱՆՏԱՆ 2010

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

### Արձանագրություն

2010 թվականի սեպտեմբերի 15-ին տեղի ունեցավ Կոտայքի մարզի Ֆանտան գյուղական համայնքի ղեկավարի 2010թ-ի հաշվետու ժողովը:

Ժողովին ներկա էին համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները, ավագանու անդամները և համայնքի շուրջ 20 բնակիչներ:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Նորայր Կարապետյանը, նշելով, որ ժողովի նպատակը համայնքում կատարված աշխատանքները ներկայացնելն է:

### ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում:
2. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում:
3. Համայնքի ղեկավարի գործունեությունը կոմունալ տնտեսության բնագավառում:
4. Համայնքի ղեկավարի գործունեությունը հողօգտագործման բնագավառում:
5. Համայնքի ղեկավարի գործունեություննն առևտրի և ծառայությունների բնագավառում:
6. Համայնքի ղեկավարի գործունեությունը մշակույթի և սոցիալական ծառայության բնագավառում:
7. Համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում:
8. Համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում:
9. Համայնքի ղեկավարի ելույթը համայնքում իրականացվող ծրագրերի մասին:

*ԶԵԿՈՒՅՈՂ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

2010 թվականին Կոտայքի մարզի Ֆանտան համայնքում կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում, որի արդյունքում գրանցվել է.

Համայնքի բնակչությունը՝ 1044

*որից*՝

արական սեռի՝ 495

իգական սեռի՝ 549

Տնտեսությունների թիվը՝ 268

Համայնքի ղեկավարի կողմից մինչև հաշվետու ժամանակը կատարվել է 46 քաղաքացու ընդունելություն: Քննության են առնվել նրանց դիմումները, առաջարկությունները և բողոքները, անհրաժեշտության դեպքում ձեռնարկվել են միջոցներ:

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

| 01 հունվարի 2010թ. առ 15 սեպտեմբերի 2010թ. | | | | |
|---|---|---|---|---|
| № | Եկամուտների անվանումը | Պլանավորված տարեկան (հազ. դրամ) | Փաստացի (հազ. դրամ) | Տոկոս |
| 1. | Հողի հարկ | 4772.0 | 4555.2 | 95.5 |
| 2. | Գույքահարկ | 856.8 | 825.5 | 96.3 |
| 3. | Տեղական տուրքեր | 35.4 | 53.4 | 150.8 |
| 4. | Դոտացիա | 3893.1 | 3664.1 | 94.1 |
| 5. | Վարձակալություններ | 377.3 | 759.5 | 201.3 |
| 6. | Այլ մուտքեր | 495.8 | 3.0 | 0.6 |
| 7. | Պատվիրակված լիազ. | 425.0 | 300.0 | 70.6 |
| Ընդամենը | | 10855.4 | 10160.7 | 93.6 |

| 01 հունվարի 2010թ. առ 15 սեպտեմբերի 2010թ. | | | | |
|---|---|---|---|---|
| № | Ծախսերի անվանումը | Պլանավորված տարեկան (հազ. դրամ) | Փաստացի (հազ. դրամ) | Տոկոս |
| 1. | Աշխատավարձ | 5652.5 | 4190.6 | 74.1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Պարգևատրումներ | 425.0 | 476.0 | 112.0 |
| 3. | Սոց. ապ. վճարներ | 1218.3 | 1060.0 | 87.0 |
| 4. | Էներգետիկ ծառ. | 141.7 | 40.0 | 28.2 |
| 5. | Կոմունալ ծառ. | 27.0 | 27.0 | 100.0 |
| 6. | Կապի ծառ. | 354.2 | 227.3 | 64.2 |
| 7. | Ներքին գործուղումներ | 106.2 | 90.0 | 84.7 |
| 8. | Համակարգչային ծառ. | 21.2 | 21.6 | 101.9 |
| 9. | Տեղեկատվական ծառ. | 85.0 | 89.8 | 105.6 |
| 10. | Մասնագիտական ծառ. | 512.3 | 247.0 | 48.2 |
| 11. | Մեք. և սարք. ընթ. նոր. | 99.2 | 100.0 | 100.8 |
| 12. | Գրասեն. նյութեր և հագ. | 106.2 | 130.0 | 122.4 |
| 13. | Տրանսպորտ. նյութեր | 566.7 | 500.0 | 88.2 |
| 14. | Այլ նպաստներ բյուջեից | 587.9 | 230.0 | 39.1 |
| 15. | Պարտադիր վճարներ | 70.8 | 15.0 | 21.2 |
| 16. | Շենքերի և շինութ. կառ. | 6979.1 | 4000.0 | 57.3 |
| 17. | Նախագծահետազ. ծախսեր | 283.3 | 400.0 | 141.2 |
| Ընդամենը | | 17236.6 | 11844.3 | 68.7 |

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

2010թ-ի հունվարի 1-ից մինչ օրս համայնքում կանոնավոր կերպով՝ շաբաթական 2 անգամ, կազմակերպվել է աղբահանություն:

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կատարվել է հողամասերի ընթացիկ հաշվառում, կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռ: Վարձակալության են տրվել համայնքային սեփականություն համարվող արոտավայրեր:

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Իրականացվել է հսկողություն առևտրի և ծառայությունների բնագավառում, առևտրի 3 (երեք) օբյեկտներին տրվել են ոգելից խմիչքների և/կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱ-ԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ, հաշվի առնելով Հայրենական Մեծ Պատերազմի և արցախյան պատերազմի վետերանների և մասնակիցների սոցիալական անբարենպաստ պայմանները, վերջիններիս տրամադրվել է դրամական օգնություն:

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱ-ԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդություններ-ի, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները կազմակերպելու համար գումար է փոխանցվել:

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կատարվել է վերահսկողություն բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում:

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵ-ՐԻ ՄԱՍԻՆ

2010թ-ի հունվարի 1-ից մինչ օրս համայնքում իրականացվել է փողոցային լուսավորության վերականգնման աշխատանքներ:

*Նիստի օրակարգում ընդգրկված հարցերն ավարտվեցին և համայնքի ղեկավարը նիստն հայտարարեց փակված:*